Պատմվածք, Արձակ, Հայ գրականություն

ՄԿՐՏԻՉ ԱՐՄԵՆ

ՄՈՍԿՎԱՆ ՆԵՐՍՈՒՄ

Տեսնես ո՞ր խելագար ճարտարապետն էր կառուցել այդտեղ այդ զրուցարանը…

Փշալարերով ու բարձր գերանապատնեշով պատած այդ ճամբարում, որտեղ կանգնած էին միայն սարսափելի բարաքներ՝ կեղտոտ, անկանոն ու ողորմելի, որտեղ գետինը միշտ ծածկված էր ցեխաջրով և մինչև արտաքնոց գնալ ծուլացող կալանավորների մեզով, բակի ուղիղ կենտրոնում, կանգնել էր այդ սքանչելի զրուցարանը՝ թարմկանաչ գույնի ներկված։ Դրա կլոր պատերը կարծես ժանյակից լինեին. տախտակի նեղ շերտերը շեղակի խաչաձևում էին իրար՝ գոյացնելով փախլավայաձև անցքեր, դարձնելով զրուցարանը օդային, թեթև, թափանցիկ մի ցանց։ Թեքկոնուսաձև կտուրի կենտրոնում ցցվել էր իլիկաձև մի գեղեցիկ սյունիկ, որը կարծես ամբողջ կառուցվածքի հեշտին ձգտումը լիներ՝ դեպի օդի արձակությունն ուղղված:

Նորմալ մարդն այդպիսի սարսափելի վայրում չէր կառուցի այդպիսի գեղեցկություն։ Դա կարող էր անել միայն իր սիրելի Մոսկվայի անիմադրելի կարոտից խելագարության հասած որևէ կալանավորճարտարապետ՝ վերհիշելով Գորկու, «Սոկոլնիկի» և այլ պարկերի այդպիսի զրուցարանները, կրպակները, բուֆետները, որոնք, ո՞վ գիտե, գուցե կառուցել էր հենց ինքը…

Փոքրիկ խոհանոցը չուներ ճաշ բաժանելու հարմարություն։ Ճամբարի պետը կարգադրել էր բակի մեջտեղում կառուցել մի ծածկ՝ պատերով կամ սյուներով, ճաշն այդտեղ բերելու և այդտեղից կալանավորներին բաժանելու համար։ Եվ ահա, ճարտարապետը, որին հանձնարարված էր եղել կառուցել այդպիսի մի բան, կառուցել էր այդ զրուցարանը…

Հազիվ թե ճամբարի պետը մեկուսարան նստեցրած լիներ նրան՝ գերածախսի համար։ Գերածախս չկար։ Ճարտարապետն օգտագործել էր փայտի այն նեղ շերտերը, որոնք մեխում են գերանաշեն բարաքների պատերին՝ նույնպիսի խաչաձևությամբ, որպեսզի պատերը ծեփելիս ծեփը չթափվի ներքև, այլ պահվի դրա ցանցի բջիջներում:

Եթե արված էր որևէ գերածախս, ապա դա տաղանդի գերածախսն էր, մի անպետք նյութի, որը, միևնույնն է, անգործ փտում էր դժբախտ ճարտարապետի ուղեղում:

Ո՞րտեղ էր հիմա այդ ճարտարապետը… Գուցե նրան փոխադրել էին մի այլ ճամբար, գուցե և մահացել էր՝ հիվանդանոցի լուսամուտից դուրս նետած իր վերջին հայացքը Մոսկվայի այդ փոքրիկ պատառին հառած… Մոսկվացի Լեոնիդ Կոզլովը, որին վերջերս էին փոխադրել այդ ճամբարը, չէր տեսել այդ ճարտարապետին և ոչ էլ լսել էր նրա մասին։ Իր անծանոթ հայրենակցից նրան հասել էր այդ զրուցարանը՝ որպես անհոգի մարդկանց համար անհասկանալի և անմատչելի, բայց նրանց երկուսի համար այնքան պերճախոս պայմանանշան, մի իսկական նամակ՝ լի կարոտով ու հառաչանքով, վշտով ու ափսոսանքով…

Առաջին անգամ մտնելով այդ ճամբարը, առաջին անգամ տեսնելով այդ զրուցարանը, Լեոնիդը փղձկացել էր և լացել աղի արցունքներով, բարձրաձայն ու հեկհեկ։ Ոչ ոք չէր հասկացել դրա պատճառը, բոլորը զարմացել էին և տարակուսել, որովհետև հազվագյուտ բան էր, որ մարդը ճամբարում արտասվեր, այն էլ՝ առանց պատճառի։ Մարդկանց աչքերից կարող էին գլորվել քարեր, բայց արցունք՝ երբեք…

Այնուհետև Լեոնիդն իրեն երջանիկ էր զգացել, երջանիկ՝ իր ողբերգության մեջ, որ նրան փոխադրել են այդ ճամբարը, Մոսկվայի այդ փոքրիկ պատառին մոտիկ։ Վաղ առավոտյան, գնալով կարտոֆիլի դաշտերը՝ ցանելու, քաղհանելու կամ բուկ լցնելու, նա ամբողջ օրը երազում էր այն մասին, թե երբ պիտի վերադառնար ճամբար և տեսներ Մոսկվայի այդ պատառը։

Ոչ, ճաշ ստանալու ժամանակ նա չէր բարձրացնում հայացքը և չէր նայում զրուցարանին։ Այդ ժամերին դրա ներսում կանգնած էին լինում նախաճաշի կամ ընթրիքի կեղտոտ կաթսաները, իսկ դրանց մոտ՝ քրեականը՝ իր այնքան աչառու շերեփը ձեռքին։ Կալանավորները, զրուցարանի լուսամուտի մոտ երկար հերթ կանգնած, ստանում էին իրենց բաժինը և հեռանում։ Ապա շուտով շատերը վերադարձնում էին և բոլոր կողմերից փակչում դրա ժանյակե պատերին, փախլավայաձև անցքերից նայում ներս։ Նայում էին առանց հույսի, թե կարող էին ստանալ ևս մի շերեփ։ Նայում էին որպես լուսնոտներ կամ հիմնոսվածներ, որովհետև ի՞նչպես կարելի է չնայել ճաշի կաթսաներին…

Լեոնիդը զրուցարանը տեսնում էր միայն գիշերները։ Երբ կալանավորները ջարդված քնում էին մեռելի պես, նա, կտրելով իր քունը, վեր էր կենում սրտատրոփ և գնում՝ ինչպես ժամադրության։

Լինում էին հատկապես երջանիկ գիշերներ, երբ փայլում էր լիալուսինը։ Լեոնիդը գնում էր դեպի զրուցարան, կանգ առնում մի քանի քայլ հեռավորության վրա, նայում բաղձանքով ու տխուր ժպիտով, ապա, սրբելով ակամայից թրջված աչքերն իր կարկատված բուշլատի թևքով, մոտենում էր և զգուշությամբ բացելով դուռը, որ չճռնչա, մտնում էր ներս։

Նստում էր Լեոնիդը ժանյակե պատերի տակ սարքված նեղ նստարաններից մկեի վրա, կարկատված արմունկները հենում էր կարկատված ծնկներին, առնում էր մազակալած այտերն իր կեղտոտ բռունցքների վրա և լալիս, լալիս… Ապա չորանում էին նրա արցունքները՝ աղի ու տհաճ, իսկ լացը շարունակվում էր նրա ներսում։

Լեոնիդը վերհիշում էր այդպիսի զրուցարաններ Մոսկվայի պարկերում, մանավանդ Գորկու անվան պարկում, իրեն և իր սիրեցյալ աղջկան՝ այնտեղ, միասին նստած։ Զրուցարանի մոտով անցնում դառնում էր ժողովուրդը, շուրջը շնչում էր խոտի, թփերի և ծառերի կանաչը, ինչոր երեք տարբեր հեռավորություններից լսվում էին երեք տարբեր նվագներ, մոտ ու հեռու շաղ էին եկել մեծ ու փոքր, սպիտակ, դեղին կամ գույնզգույն լույսեր…

Կամ դա զրուցարան չէր, այլ փոքրիկ ռեստորան։ Նա նստած էր այնտեղ, սեղանակներից մեկի մոտ, իր ընկերընկերուհի ուսանողների հետ։ Մյուս սեղանակների շուրջը նստած էին ուրիշ երիտասարդներ։ Իսկ շուրջը Մոսկվան էր՝ օվկիանոսի պես փռված…

Լեոնիդը զրուցարան էր գալիս կալանավորների գիշերային հաշվումից հետո։ Համաձայն ինչոր մարդկանց կողմից արված կարգադրության, նրանց հաշվում էին գիշերցերեկ։ Հաշվում էին՝ առավոտյան աշխատանքի տանելուց առաջ։ Հաշվում էին՝ աշխատանքի ընթացքում մի քանի անգամ։ Հաշվում էին՝ աշխատանքից հետո շարք կանգնեցրած ժամանակ, դեպի ճամբար քայլելուց առաջ։ Հաշվում էին՝ ճամբարի դարպասի մոտ։ Հաշվում էին՝ ընթրիքից հետո, հատկապես այդ նպատակով նրանց հանելով բարաքներից։ Մինչև իսկ կեսգիշերին գալիս էին բարաքները՝ լապտերները ձեռքերին, և հաշվում…

Տարիներ շարունակ հաշիվը ճիշտ էր լինում, պակասողները պակասում էին օրինավոր կերպով՝ մեռնելով կամ փոխադրվելով, ավելացողներն ավելանում էին նույնպես օրինավոր կերպով՝ ապօրինի նորանոր ձերբակալությունների միջոցով։ Բայց հաշվողները, բթամիտ համառությամբ, հաշվում էին, հաշվում, հաշվում…

Եթե հատուկենտ մարդիկ որոշում էին փախչել և փախչում էին, ապա հաշվված լինելը ես չէր պահում նրանց, նրանք հարգանք չունեին թվաբանության նկատմամբ։ Ընդ որում, նրանք

բոլորը փախչում էին անտառից, դաշտերից, և ոչ մեկը՝ ճամբարից։ Բայց էլի, նրանց հաշվում էին նաև ճամբարում, ներառյալ նաև կեսգիշերով…

Ուստի և Լեոնիդն ստիպված էր լինում զրկվել կալանավորի ամենաթանկագին բանից՝ քնից, որպեսզի հավաստիանար, որ հաշվողները եկան ու գնացին, ապա վեր կենար և գնար իր ժամադրությանը։

Ամիսներ շարունակ, ամեն գիշեր, կրկնվում էր նույնը։ Երբեմն Լեոնիդը, անքուն և ջարդված էր հենց այդտեղ, զրուցարանում, իսկ երբեմն, սրսփալով գիշերային ցրտից, վերադառնում էր բարաք։

Մի երեկո, սակայն, բարաքում սպասելով հաշվողներին, Լեոնիդը քնեց։ Արթնացավ հանկարծակի, վեր ցատկեց նստեց և զգաց, որ շատ է քնել և հաշվողները, իհարկե, եկել են և անցել։

Նա գնաց իր ժամադրությանը։ Տաք գիշեր էր, լուսնկա, և նա լույսի տակ հստակորեն տեսավ իրեն բաժին ընկած այդ փոքրիկ Մոսկվան։ Մտավ ներս, նստեց սկսեց շոյել զրուցարանի ծակոտեն պատերը, տխուր ժպտալ մենակության մեջ, լուռ խոսքերով դիմել իր Մոսկվային։

Հազիվ մի քանի րոպե էր, ինչ նա նստել էր, երբ դարպասի կողքի անցատնակից ճամբար մտան չորսհինգ պահակներ՝ վառված լապտերներով, և ցրվեցին ամեն մեկը մի բարաք՝ հաշվելու համար կալանավորներին։

Լեոնիդը ոչինչ չնկատեց և շարունակեց նստած մնալ իր Մոսկվայում։

Քիչ հետո, մեկառմեկ, պահակները դուրս ելան բարաքներից և գնացին։ Վերջինը դուրս ելավ այն պահակը, որը մտել էր Լեոնիդի բարաքը։ Նա չգնաց դուրս, այլ դիմեց դեպի արտաքնոց։ Լապտերը երկարեց ներս, նայեց։ Չտեսնելով ոչ ոքի, նա մի պահ կանգ առավ տարակուսած, ապա, ինքն էլ գիտենալով, որ ոսկորից ու մաշկից բաղկացած կանալավորը չի կարող գոլորշիանալ անհետ, մտածեց, թե էլ որտեղ կարելի է փնտրել նրան։ Եվ քանի որ ուրիշ տեղ չկար, նա քայլերն ուղղեց դեպի զրուցարան։

— Ի՞նչ ես անում էդտեղ,— հարցրեց նա՝ ավելի շուտ զարմացած, քան թե բարկացած։— Սկսել էի կարծել, թե դու փախել ես։

Լեոնիդը սարսափելի ցնցվեց անսպասելի ձայնից, ապա մի վայրկյանում վերադառնալով Մոսկվայից ճամբար, ասաց հանգիստ.

— Այո, ես փախած եմ։

— Ի՞նչ ես դուրս տալիս։

— Ես ազատության մեջ եմ։

Պահակը բարձրացրեց լապտերը, նայեց կալանավորի երեսին։ Ինչպես որ լացն էր հազվագյուտ ճամբարներում, այնպես էլ խելագարվելը։

— Դու կարծում ես, թե ազատությունը միայն ճամբարի շո՞ւրջն է,— «դու»ով հարցրեց Լեոնիդն իր հասակակից պահակին։— Ճամբարի շրջանակը կենտրոնում բաց է և այստեղ էլ ազատություն է։ Ես փախած եմ։ Ես Մոսկվայում եմ։

— Դու մոսկվացի՞ ես,— հարցրեց պահակը՝ կանգնելով կալանավորից պատշաճ հեռավորության վրա։

— Այո։ Այստեղացի։

— Գնա բարաք,— ավելի շուտ խորհուրդ տվեց, քան թե կարգադրեց պահակը։

— Եթե կարելի է՝ թույլ տուր մնամ։ Ես ամեն գիշեր եմ գալիս այստեղ։

— Ինչո՞ւ։ Բաղլինջները կծո՞ւմ են։

— Կծում են։ Բայց դա չէ կարևորը։ Թույլ կտա՞ս։

— Նստիր՝ ինչքան ուզում ես,— բարեհոգաբար թույլ տվեց պահակը։— Բայց ինչի՞ համար։

— Դու եղե՞լ ես Մոսկվայում։

— Ոչ։

— Չես ուզեցել երևի։

— Ի՞նչպես չեմ ուզեցել։ Ամբողջ կյանքումս եմ երազել։ Դու Մոսկվայի հենց միջի՞ց ես։

— Այո։ Նստիր, քաղաքացի պահակ, մի վախենա, ես չեմ խելագարվել։ Այս զրուցարանը շատ նման է Մոսկվային, դրա համար գալիս եմ ամեն գիշեր, կարոտս առնում։ Հասկացա՞ր։

— Դա հասկացա,— ասաց պահակը՝ նստելով նրանից մի քիչ հեռու և լապտերը դնելով այնպես, որ լույսը դրսից չերևա։— Բայց չեմ հասկանում մի ուրիշ բան։ Եթե դու էդքան սիրում ես Մոսկվան, բա էլ ինչո՞ւ էիր ծախում ֆաշիստներին…

Լեոնիդը նայեց իր հասակակցին։ Նրանք իրար նման էին ոչ միայն տարիքով, կազմվածքով, այլև, որոշ չափով, նաև դեմքով։ Ինչ հաջողությամբ որ նրանք նստած էին դեմդիմաց՝ մեկը որպես կալանավոր և մյուսը որպես պահակ, նույն հաջողությամբ էլ կարող էին նստել հակառակ վիճակում։ Նրանք նայեցին միմյանց աչքերի և երկուսն էլ հասկացան այդ բանը։

— Եվ դու հիմարի պես հավատո՞ւմ ես դրան,— հարցրեց կալանավորը։

— Խոսքերդ չափավորիր,— կամացուկ պատասխանեց պահակը։

— Ավելի շուտո՝ ոչ թե չափավորեմ, այլ այդ մասին բոլորովին չխոսեմ,— համաձայնվեց կալանավորը։— Ոչ ես ու դու ենք հնարել այս կարգը, ոչ ես ու դու ենք մեղավոր, ճի՞շտ է։ Եկ խոսենք Մոսկվայի մասին։

— Խոսիր,— ասաց պահակը։

— Ես կպատմեմ թե՛ քեզ համար, թե՛ ինձ։

— Պատմիր,— ասաց պահակը։

— Ո՞ր ծայրից սկսեմ…— Կալանավորը մտածեց։— Եկ սկսեմ հենց այս զրուցարանից… Սա կանգնած է Գորկու անվան պարկի ուղիղ մեջտեղում։ Լսե՞լ ես այդ պարկի մասին։

— Լուսանկարներն ունեմ տանը։

— Ամեն երեկո հանդիպում և այնտեղ նստում էին մի ուսանող և ուսանողուհի։ Նրանք երկուսն էլ սովորում էին վերջին կուրսերում։ Տղան՝ ճանապարհների հաղորդակցության ինստիտուտի, աղջիկը՝ Տիմիրյազևի անվան գյուղատնտեսական… Նրանք ոչ ոքի ոչ մի վնաս չէին հասցրել, ոչ մի, ոչ մի… Չգիտեմ, ո՞ւմ էր հարկավոր, որ ուսանողն աքսորվեր որպես հակահեղափոխական խմբակի անդամ, իսկ ուսանողուհին այլևս մենամենակ գար այդ զրուցարանը, նստեր ամեն երեկո և արտասվեր…

Լեոնիդը լռեց մի պահ, ցնցեց գլուխը։

— Զրուցարանի շուրջը…

— Սպասիր… Դեռ դուրս մի գա զրուցարանից։ Շարունակիր… նրանց մասին։

— Ուսանողը և ուսանողուհին որոշել էին իրենց ամբողջ կյանքը նվիրել ժողովրդին։ Մեկը երազում էր երկաթուղիներ անցկացնել անապատներով ու տունդրաներով, իսկ մյուսը՝ այգիներ ու պարտեզներ բարձրացնել դրանց շուրջը։ Նրանք երջանիկ էին, որ ունեին այդպիսի ապագա։ Իսկ զրուցարանի շուրջը…

— Քեզ ասացի՝ դեռ դուրս մի գա զրուցարանից։

— Լսիր… Իսկ զրուցարանի շուրջը զբոսնում էին նույնպիսի երիտասարդ ուսանողներ և ուսանողուհիներ։ Ճիշտ նույնպիսի երազներով ու ծրագրերով։ Բայց ինչո՞ւ ձերբակալեցին հատկապես այդ մեկին։ Եվ ինչո՞ւ ձերբակալեցին թեկուզ մի ուրիշին։ Ո՞ւմ էր դա հարկավոր, ո՞ւմ… Հա, զրուցարանի մասին… Սա կանգնած էր պարկի ամենակենտրոնում։ Իսկ պարկից ոչ հեռու Կրեմլն էր։ Կրեմլի մյուս կողմում՝ Կարմիր հրապարակը՝ լենինի դամբարանով…

Պահակը հանգցրեց լապտերը, ավելի մոտ նստեց կալանավորին։

Երբ առավոտյան կողմ հնչեց արթնացման զոնգը, նրանք սթափվեցին։ Լեոնիդն ընդհատեց իր չավարտած պատմությունը, ասաց.

— Գնա Մոսկվա, խնդրում եմ քեզ։ Հենց որ արձակուրդ ստանաս՝ գնա և տես Մոսկվան։ Գոնե դու տես…

Պահակը ցնցեց նրա ուսը.

— Լսիր, Լյոնյա… Գրիր մի դիմում։ Կտանեմ ինձ հետ։

— Ո՞ւմ տանեմ դիմումը…

— Ում որ պետքն է։ Որ քեզ ազատեն։

— Կգրեմ, տար,— ասաց Լեոնիդն անհույս։— Բայց հազիվ թե բան դուրս գա, Սաշա։ Անարդարությունը կատարվել է հայրենիքի չափերով, հայրենիքի չափերով էլ պիտի վերանա։ Իսկ դու գնա Մոսկվա, Սաշա, անպայման…

— Իսկ դո՞ւ, Լյունյա…

— Ե՞ս… Ես դեռ պիտի սպասեմ։ Ուրիշ ի՞նչ կարող եմ անել։ Ահա իմ Մոսկվան։ Առայժմ։

Խոհանոցի դուռը բացվեց, ճաշ բաժանողն ու մի այլ կալանավոր դուրս հանեցին ճաշի բաքը՝ բերելու համար զրուցարան, որն այլևս զրուցարան չէր, այլ ճաշ բաժանելու տեղ։

— Գնա բարաք, պատրաստվիր ելնելու աշխատանքի, կալանավոր,— կարգադրեց պահակը։

— Լսում եմ ձեզ, քաղաքացի պահակ,— հնազանդվեց կալանավորը։

Նորից սկսվեց ճամբարի առօրյան։